925

ᎠᏍᏓᏅᏍᏗ

ᏦᏗᏓᏂᏁ

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-06-29 06:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS

Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ԸՄԲՈՍՏ ԵՐԳԵՐ

ԳՐՊԱՆԻ ԵՐԳԱՐԱՆ

925

.. Ես մինչ ի մահ կախաղան.
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ կրկնեմ,
Անդադար՝ ազատութի՛ւն։

1915 ՀԱՅՐԵՆԻՔ ՏՊԱՐԱՆ ՊՕՍԹԸՆ

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բոլոր իրաւունքները վերապահուած են

Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ԶՕՆ

«Ըմբոստ Երգեր»ի այս հաւաքածոն նուիրում եմք հայկական ազատամարտի ճանապարհին ընկած մտքի եւ սրտի «ըմ-բոստ» հերոսներին։

Ս. Զ.

Generated on 2016-06-29 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ՀԵՐՈՍՆԵՐԸ

—o—

Հին հերոսներն են ինչպէս մեռնող արեւ-
ներ
Անհետացան հորիզոնից ռազմական,
Կուի դաշտում մի պահ տիրեց սեւ գիշեր,
Ազատութիւն եւ իրաւունք սուգ հագան:

Զվիատինք, վառ արշալոյս հայկական
Բիւր երփներանգ արեւներով կը ծագի.
Նորա համար այնքա՛ն արեւ մայր մտան,
Որ զարդարեն մեր մեծ այգը նոր կեանքի:

Եւ յարդարեն ծիրանիով շողշողուն
Լոյս առագաստն երրորդութեան ճշմա-
րիտ,
—Ազատութեան, իրաւունքի եւ սիրոյ,
Որոնք տրւին մեզ ազատ կեանք եւ տաք
սիրտ:

ՎՏԱՐԱՆԱԴԻ

Generated on 2016-06-29 06:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN



Մ. Նալբանդեանց

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-06-29 06:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-29 06:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

(Իտալացի աղջկան երգը)

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ.
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապուած,
Իր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։

Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքովս գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքովս լուացի։

Նայի՛ր նրան, երեք գոյնով
Նուիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանուի Տանկաստան։

Ինչքան կին—մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իր եղբօրը՝
Զանց չարեցի քո սիրուն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:54 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ահա՛ իմ գործ, ահա՛ դրրօշ,
Շո՛ւտ՝ ձի հեծիր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք՝
Պատերազմի վառ հանդէս։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ կը մեռնի,
Բայց երանի՜, որ իր ազգի
Ազատութեան կը զոհուի։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգևել։

Ես՝ անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերները անհանգիստ՝
Օրօրոցում կապկապուած,
Լալիս էի անդադար՝
Մօրս քունը խանգարած։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Խնդրում էի նրանից
Բազուկներս արձակել՝
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել։

Թոթով լեզվիս մինչ կապերն
Արձակվեցան բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան՝

Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
«Ազատությո՛ն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատությո՞ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից,,
«Ազատության դու զինուոր
Կամի՞ս գրվիլ այս օրից»։

«Ո՛հ, փոռտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ.
Ազատություն սիրողին՝
Այս աշխարհը խիստ նեղ է»։

—Ազատությո՛ւն,—գոչեցի,—
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ—
Թո՛ղ դաւ դրնէ թշնամին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սիւն՝
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար—Ազատութի՛ւն»։

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր երազի նըման,
Անցաք գընացիք, այլ չէք դառնալու.
Ո՛հ, դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր՝
Ընդունակ միայն ուրախացնելու։

Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն՝
Իր ծանր հայեացքով աշխարհի վրա.
Ամէն բան ինկաւ մըտածութեան տակ,
Որպէ չը մնաց ազատ կամ ունայն։

Գիտակցութիւնը յաջորդեց սըրան,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս.
Ապողոն տըւեց ինձ իր քընարը՝
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս։

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր՝ իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չը գտայ մի լար։

Generated on 2016-06-29 05:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցաւերից ազատելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնայ ըստրուկ՝
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ։

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ, անհոգ ու ազատ,
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։

Գերութեան շղթան ինձ ըզգալի չէր,
Եւ ոչ բրոնութեան անգութ ճանկերը.
Ձեզանից յետոյ ծանրացան նրանք,
Ո՞հ, անիծում եմ ես այս օրերը...

Լո՛ւռ կաց, դու քնար, էլ մի՛ հընչիր ինձ,
Ապողոն, յետ ա՛ռ դարձեալ դու նրան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել իր կեանքը՝ սիրած աղջկան։

Ես պիտի դուրս գամ՝ դէպի հրապարակ՝
Առանց քընարի, անզարդ խօսքերով,
Եւ պիտի գոչեմ, պիտի բողոքեմ՝
Խաւարի ընդդէմ պատերազմելով։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին։

Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած
Սըգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յատակըդ.
Հանդարտ հոսէ՛ խայտալով,—
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թըփեր թո՛ղ բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին
Ճրկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Դառն ու ուլը քու վրնիտ
Ջուրը մտնեն համարձակ»։

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի Է՞լ լռենք եղբարք, հիմի Է՞լ
Երբ մեր թշնամին իւր սուրն է դրրել,
Իր օրհնասական սուրը մեր կրծքին
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք հայեր ի՞նչ անենք,
Հիմի Է՞լ լռենք։

Հիմի Է՞լ լռենք երբ մեր թշնամին
Դաւով, հրապոյրով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարհից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք.
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց.
Վա՜յ մեզ, շըղթաներով կապուած գերի
ենք—
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բըռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարշ բողոք վաղուց ապիրատ.
Մեր գլուխ լալու Եփրատ ո՞ւր պտռենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն.
Զե՞ն ասիլ, որ հայք արժանի էին
Այդ ըստըրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գի-
տենք,
Հիմի է՞լ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ե՛կ, անվախ ելնենք թրջնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,—
Ու այնպէս լռենք։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է
զարթելու
Էրթամ ախոռ, գոմշուկներրս լծեմ՝ գու-
թան վարելու։
Դէ՛հ, գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը
երթանք աշխատինք,
Հարկ ու խարնին վատէն մօտ է, վօթենք
արիւն ու քրտինք։

Հայի գութա՛ն, հայի գութա՛ն, որի՞ն
համար կը ջանաս,
Ով քեզանով կը տանջուի, որին դու կուշտ
հաց կուտաս.
Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրը
կորուցի,
Անվախ սիրտը վրհատեցաւ, հոգիս
թուրքին մատնեցի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը, համ-
բերութիւնն վերջ ունի.
Դուն տեսար որ մեր դուշմանը՝ ամօթ,
խելք ու գութ չունի։
Արի՛ փըշրեմ ես քո խոփը, տանք դարբի-
նին կըռելու,
Կըռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշ-
մանի դէմ կըռելու։

Եղբարք հայեր, առէ՛ք խոփը՝ տուէ՛ք
դարբինին կըռելու,
Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաս-
տանը փրկելու։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՀԱՍՏԱՏ ՅՈՅՍԸ

Թող փըչէ քամին պաղ, պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կուզէ թող փըչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ ուշ, գարունը պիտ գայ։

Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թարձրը մառախուղ երկիր թո՛ղ փակէ.
Տարրերք աշխարհիս թո՛ղ խառնուին իրար
Յուսով եմ, վաղ ուշ՝ արև պիտ՝ ծագէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալա-
ծանք,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը.
Սարսափելի չեն հային տառապանք,
Միայն... չը հատնէր խեղճուկի յոյսը։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛ իմ սոխակ, թո՛ղ պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ մի՛ գալ
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ, աբեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ՛ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու
բունը,
Վուվուլյով տըղիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ։

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Շահի զբրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդաբար դառնալ։

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըզտի՛կ տըղայ, չեմ օրօրիլ օրօրանքըդ
որ քուն՝ լաս,
Հայ եղբարքըդ ոտքի ելան, մինակ դո՞ւ
ետ պիտ՝ մնաս.
Զարթէ՝ հոգիս, անուշ քունէդ, թող
աչքերըդ լոյս տեսնեն,
Արևմուտքէն արև ծագեց, բախտը բանեց
հայ ազգին։

Զար սուլթանին ոսկի գահը ջարդըւեցաւ,
վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատու-
թիւն ծագեցաւ.
Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն
կը գտնէ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սիրուն որդի՞ս միթէ մինակ չար լուծի տակ պիտ՝ մընէ։

Մենք սուլթանէն շատ խնդրեցինք կողկոզագին ու լացինք,
Աղի-աղի արտասուքով ձեռքն ու ոտը լըւացինք.
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ, նայենք, նա կը լըսէ՞ շառաչիւնը սուրերուն։

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ ափիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.
Ըստրուկ գընա՛ արեան դաշտը, վերադարձիր ազատուած.
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խընդիրքը, ո՛վ Աստուած։

(1877 թ.)—ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅԹ

Հերի՛ք, որդեակք այսքան տարեան տուռապանք,
Հերի՛ք, դաժան անգութ քիւրդի ոտն ի՛հ.

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կանք,
Քանի խոնարհ գլուխ տվինք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին։

Հերիք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք հա-
բազատ
Հին քաջերի արիւնից ենք եւ ազատ.
Թէեւ չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նի-
զակ,
Մեր բահերն էլ կանեն նրանց շանսատակ։

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն, այլ գազաններ վայրե-
նի.
Մերն է ձիրքը, մերն է ուսում ու հան-
ճար.
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն ար-
դար։
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք. ևն։

Նրանց է մեր կոյս աղջկունք, հարսունքը,
Նրանց է մեր ճակտի քրտանց արդիւնքը
Նրանց սրի ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց գամբռ մեզնից շատ է թանկագին։
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք. ևն։

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում
Որոնք մեր վրայ լռիկ արցունք են թա-
փում,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զեն խնայիլ թեւ ու թիկունք, կը հասնին,
Շուտով կը գան, կը միանան սուրբ գոր-
ծին։
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք. և.ն։

ՄՆԱԿԵԱՆ

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՑ

Լռեց—Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին.
Մնացի մինակ հոգիս վրդովուած,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած։

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Ցիշում եմ թշուառ վինակը ազգիս։

Ա՜խ, ցոլա՛, փայլէ տխրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս եւ հային։

Պատմէ շատերուն Վարդանի մահը
Կամ ինչպէ՛ս կորաւ հայ ազգի գահը.
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան,
Մայրենի հողը—աշխարհն Հայաստան։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛հ դու բարեկամ այրած սրրտերու,
Խօսնեակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պըլպուլիկդ, երգէ՛ ի սարէդ,
Զանմահ քաջքն հայոց՝ երգէ՛ հոգւոյս
հետ.

Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունտ ա-
ռաւ.
Ի խաչին թեւէն թրռայ ու հասայ
Գրտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ.

Պըլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ
Որ զՎարդան ի վարդըն տեսնէ կարմրիկ.

Զըմեռն յանապատ կը գընայ կայ ի լաց,
Գարունն յԱրտազ գայ ի թուփ վարդենի-
եաց,
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն՝
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վար-
դան։

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՎԱՆԱՑ ԾՈՎԱԿ

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում
ես,
Ողբակից լինել չը կամի՞ս դժբախտիս.
Շարժեցէ՛ք, զեփիւռք, ալիքը վէ՛տ—
վէ՛տ,
Խառնեցէ՛ք արտասուքս այս ջրերի
հետ։

Հայաստանի մէջ անցքերին վրկայ,
Սկիզբից մինչեւ ցայժմ, խընդրեմ, ինձ
ասա՛.
Միթէ միւտ այսպէ՞ս կը մնայ Հայաս-
տան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան։

Մի՞թէ միւտ այսպէս, ազգը խրղնալի,
Կը մնայ ըստրուկ օտար իշխանի.
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին
Անարժան են հայն ու հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմեն դէպ իրենց սիրուն հայրենիք։

ՐԱՖՖԻ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նըստեր ես ճամբաներուն անկիւնը.
Մազերդ ի վար իջեր կախուեր է ձիւնը.
Մարմնոյդ վըրայ կը փոսանան մուք խոցեր,
Եւ աչըներդ արիւնալի լիճ են դարձեր։

Ո՞ր չար պարիկը հիւսեց թելը բաղդիդ...
Ո՞վ՝ տեսնելով քեզ տապալած ու վըտիտ՝
Պիտի յիշէ որ դուն երբեմըն հըզօր
Աղջիկն էիր սէգ աչքերով լուսաւոր։

Կը ծփային մազերդ ինչպէս դրօշ մը լայն
Ազատ լերան մէջ՝ ուր հոգիդ մեծաձայն
Կը մըռընչէր խոյանալով սարէ սար.
Ու ծոցդ՝ հըպարտ՝ մեղր ու կաթով կ'ուռենար։

Քեզ ցանկացին յելուզակները բոլոր,
Պաշարեցին քեզ ոսոխներ ահաւոր.
Երկա՜յն ատեն ոգորեցար կուեցար
Մինչեւ՝ ա՛լ խոնջ՝ ինկար գետին ուժասպառ։

Դանդաղօրէն կը շարժես գլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրօր կը կարդաս

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զաւկընեբուդ որ արիւնին մէջ ինկան
Եւ անոնց՝ որ չորս հովերուն ցրեցան։

Օրօր կանանչ արեւներուն, լուսաւէտ.
Աչքընեբուն որ մարեցան առ յաւէտ.
Եւ անոնց որ դեռ կ'ապրին ու կը տանջըլին
Զընտանիներուն մէջ ու մռայլ աֆսորին։

Հերի՛ֆ, հերի՛ֆ...այդ օրօրդ ո՛ղբ է մահու.
Հեռի՛ֆ, մենֆ նոր օրօր ունինֆ երգելու.
Պիտի երգենֆ օրօրն յոյսին ու վրէժին,
Ու մեռելներն պիտի հողուն տակ սարսին...

Հերի՛ֆ, հեռի՛ֆ... վեր առ գլուխդ ու մի՛ լար.
Ցաւը սուրբ է, ցաւը՝ մեծ ու փրրկաբար.
Ոչինչ կայ վեհ, ֆան խաչին տակ զոհն արի.
Գիշերին մէջ կը հիւսի ա՛յգը բարի։

Ա. ՁՕՊԱՆԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակին,
Գետնին նայելով մնացել եմ նստած.
Ձեռքս ծոցումը, գլուխս՝ մէկ լեռ քարին՝
Տրված լալիս եմ, օրը խաւարած։

Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
Քեզ մըտիկ տալով, ա՜յ իմ քաղցր Մասիս,
Աղի արցունքով էրված, խորովված՝
Երեսիդ նայեմ, մընամ քարացած։

Ծնող, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէր յիշելով՝
Եա՛րաբ, ե՞րբ կ'ըլի՝ որ ես ձեզանից
Իմ կարոտս առնեմ՝ ձեզ ջա՛ն ասելով։

Եա՛րաբ, ձեր ճըտռվն մէկ օր է՞լ կ'ընկնեմ,
Եա՛րաբ, ձեր երես մէկ օր է՞լ տեսնեմ.
Եա՛րաբ, ծունկ ծունկի տված ձեզ կ'ասե՞մ,
«Ա՜յ, իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնեմ։»

Աչքը ծով դարձաւ ճամբին նայելով,
Մէկ դուռ որ գլխիս պտուտ ա գալիս՝

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ ե՞րբ մէկ խաբար հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով, ասում եմ լալիս.—

Խ. ԱԲՈՎԵԱՆ

ԿՌՈՒՆԿ

Կռո՛ւնկ ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
Կռո՛ւնկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Թողել եմ ու եկել մըլբերս ու այգիս.
Քանի որ ա՛խ կ'անեմ, կու բաղուի հոգիս.
Կռո՛ւնկ, պահ մի կեցիր, ձայնիկդ ի հոգիս։
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ.
Ձայնիկդ անուշ կուգայ բան զչրի տոլապ.
Կռո՛ւնկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի-Հալապ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կոռ՛ունկ, մեր աշխարհէն խապրիկ մը
չունի՞ս։

Սրբտերնիս կամեցաւ, ելանք, գընա-
ցանք,
Այս սուտ աստվորիս տէրտերն իմա-
ցանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք.
Կոռ՛ունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չու-
նի՞ս։

Աստվորիս բաներն կամաց կամաց է,
Մի՛թէ Աստուած լըսէ դըռնակն բացցէ.
Ղարիպին սիրտն է սուգ, աչերն ի լաց է.
Կոռ՛ունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չու-
նի՞ս։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դո՛ւ, գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թըռչում ես այդպէս արագ։

Ա՛խ, թըռի՛ր, ծիծեռնա՛կ,
Ծընած տեղըս—Աստարակ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անդ շինիր քո բոյնը—
Հայրենի կըտուրի տակ։

Անդ՝ հեռու՝ ալեւոր
Հայր ունեմ ես սրգաւոր,
Որ միակ իւր որդուն
Ըսպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նորան՝
Ինձնից շատ բարեւ արա՛.
Ասա՛, թող նըստի լայ
Իր անբաղդ որդու վըրայ։

Դու պատմէ՛, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել է կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է թըւում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտըս չի գալիս։

Շուտով Սառ հողի տակ
Կպառկեմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սըրտում
Միշտ ցաւալի յիշատակ։

Դէ՞հ, սիրուն ծիծեռնա՛կ,
Հեռացի՛ր, գընա՛ արագ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դէպ՝ հայոց աշխարհը,
Ծընած տեղը—Աշխտարակ։

Գ. ԴՈԴՈԽԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

Ով ծիծեռնակ, վարանած թռչնիկ,
Ի՞նչ տխրագին ձայնիւ
Կ'եղանակես մօտ իմ բանտին.
Մի՞թէ վարուժանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց զքեզ,
Եւ դուն անմխիթար կը հեծեծես,
Ո՞հ, լաց ուրեմն ինծն պէս։

Բայց երանի՜, քեզ բիւր երանի՜,
Կրնաս թռչիլ՝ թեթեւ
Թեւոցդ ի ծայր ընդ սար ու ձոր,
Իսկ հոս՝ արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մ'ալ կը փչէ,
Որ տանի ձայնն իմ սիրելեաց։

Գէթ դուն գնա՛ գըտնել սիրելիս,
Սըլացիր արագ, սակայն
Դարձի՛ր նորէն մօտ չըւառիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լեր դու վրկայ տրխուր մահուանս,
Եւ շիրմիս վրայ ճրւճրւալով՝
Գէթ դու յիշէ զիս անմոռաց։

ԳՐՕՍՍԻ

Ի Մ Մ Ա Հ Ը

Եթէ տրժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'ինչնէ իմ դէմ,
Շոգիանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ սնարս իմ տիպար
Մոմ մը վրտիտ ու մահադէմ,
Ո՞հ, ճրշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակտովս արտօսրազօծ
Զիս պատանի մէջ ցուրտ զերդ վէմ
Փաթթեն, դրնեն սեւ դագաղը,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ հրնչէ տրխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դրժխեմ,
Դագաղս առնէ իր համբր քայլ,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սեւ ունին ու խոժոռ դէմ,

Generated on 2016-06-29 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Համասրփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սրգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէ՛ք՝ որ միշտ կենդանի եմ։

Իսկ անձնաւն եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ո՞հ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ...։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած ես, լընակ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հալւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի մը նայեցաւ։

Եւ կամ մի՞թէ կ'զմայլին
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նմանին փըրփուրիդ։

Մելամաղձոտ լընակ իմ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քեզ հետ ըլլանք մըտերիմ.
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լռել ու խոկալ։

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս ա՛յնքան խոկ ունի.
Որքան ունիս դու փըրփուր՝
Սիրտս ա՛յնքան խոց ունի բիւր։

Այլ եթէ գոգդ ալ թափին
Փոյլքն աստեղաց երկընքին,
Ընմանիլ չես կրնար դուն
Սիրտիս՝ որ է բոց անհո՛ւն։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք,
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ
Ցաւերդ արաւ բիւր հազար։

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թըփիկ որոնեց,
Փոխան թըփի փըշեր գըտաւ—
Լալահառաչ ձայն հանեց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայրիկն ասաց—«Իմ հայրենեաց
Փուշն անուշ է քան ըզվարդ,
Ես այն փըշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ»։

«Այն սայրասուր փըշերն ամէն
Փունջ կապեցէք շարէ-շար,
Թողէ՛ք գըլխիս պըսակ կապեմ
Որուն ճակատս է յօժար։»

Հայրի՛կ, Հայրի՛կ, քո սուրբ ճակատ
Արիւն-արցունք են, ո՞հ միշտ,
Փըթթեալ վարդի կարմիր թերթեր
Կը պսակեն փառոք զարդ։

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԻԿԻՆ

Թո՛ղ բարձրացնեն ճռինչ, աղաղակ
Թուքակ, կաչաղակ,
Միակ վայելուչ, միակ սրտառուչ
Երգիչն է սոխակ։
Թո՛ղ վայեն բուեր, ագռաւներ անթիւ,
Հազար հաւ ու ճիւ,
Ամենից մեծը, ամենից բարձրը—
Է ազատն Արծիւ։
Թո՛ղ տան՝ ում կուզեն՝ մանեակ մատա-
նիք,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նշաններ, դափնիք,
Միակ արժանին, միակ սիրելին
Կը մնայ Հայրիկ։
Հայրի՛կ, ո՛հ, Հայրիկ, քո քաղցր անուան
Լինեմ ես զուրբան,
Սիրե՛մ այն հողը, որ ծնաւ քեզ պէս
Հրեշտակ պահապան։
Ո՛վ Տէր, պահպանի՛ր Դու մեր Հայրիկին,
Քո հաւատարմին,
Անպակաս արա մեր գլխի վրայից
Նորա հովանին։

Ղ. ԱՂԱՑԵԱՆ

ԱԻԱՐԱՑՐԻ ՆԱՀԱՏԱԿՔ

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լռեր են.
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց քաջերն պսակել։

Մասեաց գագաթ թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ
Աստուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել։

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցողէք ձեր ցողեր.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնով։

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, ոչ վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։

Քանակդագործ քաջն Եղիշէ
Գրիչն ի ձեռ գայ յԱրտազ,
Զափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ,
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ։

Ա՛հ, Վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնէ մահարձան
Մենաստաններ, խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ տաճար։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Վ Տ Ա Ր Ա Ն Դ Ի

Թէպէտ վրտար քաղքէ քաղաք կամ թա-
փառ,
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անգր-
թաբար,
Այլ արդէն իսկ Ազատութեան երբ վեհ
ձայն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թրռաւ բերնէս, յանձն առի զայս վիշտս համայն։
Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր։

Թէպէտ հեռի իմ սիրելեաց գիրկերէն,
Հեռի անոնց գողտրիկ ձայնէն, երգերէն,
Տըխուր ֆնարս նոճիներէն վար կախած՝
Լըռիկ ողբամ խեղճ Ազգիս բաղդն մըտայած,
Ազատութեան ես անձնուէր, եւայլն։

Թէպէտ յաչացս դառն հոսեն արտասուք,
Ցայտնել սրտիս կարօտն ու սուգ եւ պուսուք.
Այդ արտասուք սրտիս վէրքերն լուանան,
Վէրքեր, զորոնք Ազգիս ցաւերն հոն բանան.
Ազատութեան ես անձնուէր, եւայլն։

Վտարանդի, թէպէտ դառն են այս օրեր,
Օր մ'ալ տեսնես նպատակիդ ես հասեր.
Ազատութեան յաղթանակը ֆռ ձեռքիդ՝
Վարդն ու շուշան պըսակ պըճնել գան ճակտիդ.
Ազատութեան ես անձնուէր, եւայլն։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԱՐՈՒՆ

Ո՞հ, ի՞նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես՝ հովի՛կ,
Ծաղկանց վրրա գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ։

Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, անցիր սրրտէս ի բաց։

Ո՞հ, ի՞նչ աղու և սրրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերրն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ։

Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թռիր սրրտէս ի բաց։

Ո՞հ, ի՞նչ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ։

Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրրտէս ի բաց։

Թէև թռչնիկն և հովն հայոց
Աւերակաց թռչին վերայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէպէտ պղտոր վըտակն հայոց
Նոճիներուն մէջ կը սողայ.
Նոքա հառա՛չք են հայրենեաց.
Նոքա չերթա՛ն սըրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՄԱՀ ՀԱՑՈՐԴԻՈՑՆ

Դու զո՞վ խընդրես, մայր իմ անուշ.
Եկ մի դողար, մօտեցիր հոս.
Անլաց աչօք դիտէ զորդիդ,
Ու իր վէրքերն արիւնահոս։
Թրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր՝
Իբրեւ հրեշտակ նւագելով.
Զիս հանգչեցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի, հայե՛ր».
Այսպէս յայնժամ դու կ'երգէիր,
Օրօրոցիս նըստեալ քովեր։
Անոնց համար շիջաւ, եւ դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մա՛յր իմ, նայէ չորսդին,
Զարիւնոուտ քիւրտերը՝ն տե՛ս,
Հազարներով փուած գետին.
  Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մը՝ոը՝նչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրա յարձակեցան.
Ո՞վ հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան։
  Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու Ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Զի չէ՛ մեռած հայոց կը՝ոակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վը՝ոտակ.
  Խնդաց Մասիս, մա՛յր իմ, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ու արդ կ'իջնամ ի ծոցն անլոյս։
  Խաչ մը տընկէ վրրաս, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԵՂԲԱՑՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թրոչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Զունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Տո՛ւր ինձ ձեռքդ, եղբայր ենք մենք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բախտին ամէն ոխ չարանենգ,
Ի մի համբոյր ցրին ի բաց։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանցկալի եղբայր անուն։

Երբ ալեւոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքը դաժան
Քաղցր արտասւաց բուժին ցողով։
Ընդ աստեղօք, եւայլն։

Մէկտեղ լացինք մենք ի հնում,
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան,
Խառնենք զարտօսր եւ ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան։
Ընդ աստեղօք, եւայլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երբ փայլի իր մաքուր օրեր,
Երբ որ ծիծառն իր բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև՝

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ։

Տեսի դաշտերն Ոնորիոյ,
Լեռն Լիբանան և իր մայրեր.
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ և իր կօնտոլներ,
Կըզգի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարև
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհն որ ինձ ետուր արև։

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Ցիշատակաց իր կարօտի։
Ցորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարև՝

Երթամ ընկնել յիմ Կիլիկիա,
Աշխարհն որ ինձ ետուր արև։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՑՐԵՆԱՍԷՐԸ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զը գնահատուած ոչ ոքից
Բայց հաւաստեաւ անձնանուէր
Ազգիս մշակ կը հաշուիմ։

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան ջերմ սիրով.
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գնա և դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը հայոց ազգին,
Կարեկցաբար մտածիր
Ոսկէ գրգոյկն Եղիշէի՝
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ վարդան, անմահ վարդան,
Իւր խնկելի քաջերով։

Հայրենիք սեղան սրբութեան
Ես Աստուծոյ առջև,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԿԱՊՈՒՏԱԿ ԱՉԵՐ

(Սիրահար սայլորդը)

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում,
Եւ Վալդայի տըխուր զանգակը
Կամարի տակ է զողանջում։

Արթուն սայլորդը գիշերուայ դէմ
Իր վիճակի վերայ տըխրաց,
Եւ սիրուհւոյ աչաց կարօտը
Նա տըխրագին ձայնով երգեց։

«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դո՛ւք չար ոսոխներ,
Ինչո՞ւ սըրտերս բաժնեցիք։

«Մընաս բարեաւ իմ տուն հայրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը հանգչիմ՝ զերդ բոց կըրակին՝
Այս անբընակ դաշտի միջին։

«Արեւիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհում էլ որբ եմ ես.
Սըրտիս կարօտը՝ աղջկայ տեսնելից՝
Մինչեւ ի մահ զըրկուած եմ ես։»

Այս որ ասաց՝ շարժեց մըտրակը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երեք ձիանց մէջքին խրփեց.
Իր սիրուհւոյ պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց։

ՄՇԵՑՈՒ ՈՂԲԸ

Ընցաւ տարին, հայոցս էլ փառք ընցաւ
հետ.
Դրախտի սարէն գարուն յետին բարև ետ.
Կտրինք առան զէնքեր, իջան տակ հողին,
Վա՜յ մեր գլխուն՝ սև մուր էկաւ էն օրին։
Հայու աչքեր թող մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լա՜ն։

Հայերս գերի եղանք բախտին անողոք,
Աստուած, հրեշտակ, մարդ չլսեց մեր բո-
ղոք.
Մըր լարերու ծէն ծածկըւաւ Տարնոյ տակ
Մեռու դաշտեր պահեն սըրտիս հառաչանք։
Հայու աշուղք թո՛ղ մեզ լա՜ն,
Ա՜խ, մեզ լա՜ն, վա՜խ, մեզ լա՜ն։

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքև
Նըստուկ մամ, պապ, ճժեր մնացին անաւ-
րև,
Նոթի, տկլոզ, ա՜խ, չկայ տէր տիրական,
Անգութ քըրդու զուլմին եղած ենք խուրա-
պան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ղարիպ ախբէրք թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Մատղաշ աղջիկ ու հարս հայաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի.
Էնպէս դրած ձեռքերն աչից ամրչկոտ,
Գուրթի, սիրոյ, ողորմութեան է կարօտ։
Հայ աղջիկներ թող մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Կեցէ՛ք, Մըշու դաշտի քամիք, քիչ մ'կեցէ՛ք,
Մըր ողբաձէն բարևն ալ ձըր հետ տարէք,
Ու՝ երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հոնկուց ըսէք ղարիպ մըր հայ ախբերց.—
Մըր արտասուք սրբեն թող մըր աչվընուց,
Կա՝նցնի տարին էլ չը լա՛նք, էլ չը լա՛նք։

ՇՈՒՇԱՆԻԿԻՆ

Էր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից
Մեր ամենիս դուն էիր գթառատ՝
Արդ հեռանաս մեզ մութ պատէ անփարատ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քո սուրբ ձեռքով մեր վէրքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ.
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար է ադապ։

Արդ հայոց զօրքն իրեն մօտից որբանայ,
Վրաց ազգը քու խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկուի իր սուրբ շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտ ու հոգին քեզ հետ տանես,
Մաքրուհի,
Գնաս բարեաւ, միշտ լոյս հաւատն քեզ
ընկեր,
Աջն ու խաչը քեզ պահապան օր, գիշեր։

Ազգդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ
Վրաց,
Հայ անունդ միշտ պահէ անմոռաց.
Լոյս հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան՝
Լոյս հաւատդ քեզ միշտ պահէ անսասան։

Յ. ԿԱՐԻՆԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնի՛ր իմ բալիկ, օրօր ել արա՛,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Կոյր կռունկները սուգ ու շիւանով
Մեր սեւ երկնից եկան անցկացան,
Ա՜խ, մեր լեռներում նրանք կուրացան.
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալի՛կ,
Անտէր ու անթաղ մեռելները շա՜տ.
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով
Սեւ անտառներում ծունկ չոքած մնաց.
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Ցուլունք եմ շարել, կապել օրօցքիդ՝
Զար աչքերի դէմ մեր չար դուշմանի—
Քնի՛ր ու անիր, շուտ արա՛, բալի՛կ,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց.
Գիտեմ, այն դառն է, չես ուզում բալի՛կ—
Ա՜խ, վշտիս թոյնն է խմել նրա մէջ...
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կաթիս հետ մէկտեղ սեւ վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թո՛ղ նա սև վրրէժ դառնայ.
Ծլի՛ր, բոյ ֆաշիր, բոյի՛դ ես դուրբան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել...։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԴԵՌ ԳԻՇԵՐ Է

Դեռ գիշեր է. առաւօտ չէ,
Հանգիստ ֆնիր, իմ զաւակ,
Ահա՛, ծիծս առ բերանդ,
Եթէ ունիս դուն փափաֆ։
Թէեւ դրսից ֆռ ականջին
Դիպչում է սուր աղաղակ,
Քնի՛ր, ֆնի՛ր, սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու։
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին ֆեզ տալու։
Դու ֆոյրերիդ մի մտիկ տար,
Նրանֆ մեծ են, գառնուկս,
Օրօր ասեմ, դեռ դու ֆնիր,
Որ մեծանաս ձագուկս,
Ահա դրի գլխիդ տակը,
Բարձի տեղակ բազուկս.
Հանգիստ ֆնիր սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:00 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու։
Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ,
Զը լինի թէ գլորիս,
Կամ թէ ընկնիս գետնի վերայ,
Քեզ վնասես, մոլորիս,
Մտիր Մորփէոսի գիրկը,
Մինչ լեզու տվորիս.
Այժմ շուտ է սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու։
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու։

ՎՐԷԺՔ Ի ՇԱՒԱՐՇԱՆ

Բամբ որոտան, բարցուստ բոմբիւնք Ա-
բարատեան դաշտն ի վայր
Արի արանց արիւնք յեռանդ առատանան
ի հրազայր.
հրաւէր հայրենեաց, հրոչակն ընդհանուր
Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր։
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,
Որք երկրաւորիս փառաց երկնայորդ։
Հապո՛ն արի արանց մանկունք,
Հայրենավրէժ հայկազունք։
Հապո՛ն, ի զէն գունդ ի գունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ի զէն, ի վրէժ, օ՛ն անդր, յառաջ,
Ի զէն, ի վրէժ, մի ձախ, մի յաջ,
Օն անդր, յառաջ, յառաջ, յառաջ
Մի ձախ, մի յաջ,
Օն անդր, յառաջ,
Հապո՛ն յառաջ
Ի յաղթանա՛կ։

Հայկեան փանդռանց որոտընդոստ դը-
ռընչին բառբառք մարտագոռ,
Դառնագոռոչ անդրաձայնէ պարսիկ կեր-
կերն ի շեփոր.
Շարժեն հրեշտակք թևս լուսադողդոջս,
Ճիւաղք ճիւաղաց կայտռեն ի դժոխս,
Շռինդ շանթառաք զեթերոք փարի,
Սարսափին սանդարք ի խօլ խաւարի։
Հապո՛ն, արի արանց մանկունք, ևայլն

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յա-
յերս գոգ ծալ ի ծալ,
Ի ճակատուց ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց
յուրաստ կալ.
Հեծեալ հրանըժոյգ վեհին Վահանայ,
Վրէժ կանչէ արեան կարմիր Վարդանայ։
Փոնչեալ բոցաշունչ տափր ի գարշապար,
Ռազմամուտ վարգի յանժոյժ երիվար։
Հապո՛ն, արի արանց մանկունք, այլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արի՛ք ի կռիւ, քաջակորով ընդ կորակոր
հրոսն Արեաց.
Հապա՛ համարձք մեր բիւրայաղթք ձեզ
նոր հանդէսք են փառաց.
Թռէ՛ք ի ռազմ, ի խազմ, առէ՛ք զէն և
զարդ.
Երեսնիւք, յրսնիւք, հարուլ բիւրս հա-
զարս
Ի սուր, ի սուսեր կարնշեղ յաղեղունս,
Ըզսեաւ Սասանեաց ջարդել կառափունս:
Հապո՛ն, արի արանց մանկունք, Հայլն:

Մինչ ցե՞ր, ցե՞ր սուգ լինի ի հայս,
հատէ՛ք զարտօսր որբք, այրիք,
Հարանց, հարսանց, եղբարց, որդւոց,
հանուրց հայոց վրէժխնդիրք.
Թինթս առեալ երթամք յասպարէզ քաջաց
Ցերկնից հնչեն ձայն արեաց սիրելեաց.
Սօսափիւնք վերինք, արհաւիրք յերկրէ,
Քաջաց օժանդակ, զպարս հերքեսցէ:
Հապո՛ն, արի արանց մանկունք, Հայլն:

Օ՛ն անդր, ի բա՛ց հայկեան հողոց հսկա-
յազանց և սրբոց,
Ի բա՛ց ջոլիր չարական մոխրապաշտիցն
պղծոց:
Դաշտք մեր մերժեսցեն զոսկըրոտիքն ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գամ
Արիւնք վրկայից զնապաղիսն անժամ,
Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փա-
խուստ,
Մատնակուրծք ընդ հայս հայեսցեն հե-
ռուստ։
Հապո՛ն, արի արանց մանկունք, այլն։

Արք աղեղանց բարձր ի թիրախ թռուսչիք,
վերջին ձեզ խրախոյս,
Առեալ դարձցուք զանթիկնադարձ զայս
վարդագոյն դրօշն անխոյս։
Ի վերայ յիսնից յաղթից Վարդանայ,
Պարսկական բազկաւ արոյն Վահանայ,
Շեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան
Տնկել յաղթանակ անմահ յաղթութեան։
Հապո՛ն, արի արանց մանկունք,

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք
Խեղդուած մեր բողոքը յայտնենք զէն-
քերով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ մեր արդար դատը վօթենք արիւնով.
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշուած հայի որդիք հարազատ։

Քան թէ ամեն վայրկեան կենդանի մեռ-
նիլ,
Ազատութեան վնռենք աներկիւղ զոհուիլ.
Փափուկ մահնում հանգիստ կեանքը
վայել է
Ով որ հայրենիքում ազատ ապրում է։
Մեր կեանք, մեր մահ, եւայլն։

Ըստրկութեան շղթան խուլ շառաչում է
Ազատութեան ճնշուած ձայնը կոչում է.
Ազատ լեռներ թող լինի ապաստան
Եւ ընդարձակ ձորեր ազատ գերեզման։
Մեր կեանք, մեր մահ, եւայլն։

Առաջ գնանք, անվախ զարնենք Համիդին,
Փրկենք հայ գիւղացին հանենք վախուկէն
Իմաց տանք սուլթանին անխիղճ բռնաւոր
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ
օր։
Մեր կեանք, մեր մահ, եւայլն։

Ցրուած խմբեր, Հանչն, Զէյթուն, Սըուէ-
տիա,
Շտապեն միանալ եւ կազմել գունդ հայկ-
եան.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:01 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,
Կեանքը մահով կապուած կանգնել նրա
տակ։
Մեր կեանք, մեր մահ, եւայլն։

Ի ԶԷՆ ՀԱՑԵՐ.

Ի զէ՛ն հայե՛ր, ի սուր եւ ի հրացան,
Տաճկահայաստանէն կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք հայեր, թռէ՛ք դէպի Հայաստան։

Արեւելք, արեւմուտք, հարաւ եւ հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կրծքերից
Ազատութիւն հնչեց, ամէն կողմերից։

Խումբ խումբ հայեր դէպի Տաճկահայաստան
—Փրկութեան աւետիս առած իր բերան—
Դիմում են ցնծութեամբ իբրեւ հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք։

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում
Արիւնածարաւ վրէ՛ժ, վրէ՛ժ է գոչում.

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դի
մում,
Անթիւ աւար ու գանձ հայերին թողնում.
Ցաղթութի՛ն, յաղթութի՛ն գոչենք մի-
ածայն,
Թշնամին յաղթւած է. կեցցէ՛ Հայաս-
տան։

ԿՏՐԻՃԻՆ ՁԱՅՆԸ

Թող կորնչին տանիկները
Հայաստանի սուրբ հողից
Իսլամական անարգ լուծը
Ջընջըւի մեր հայրենիքից։

Բաւական է որքան նրանք
Հայի արիւն ծծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով,
Պետութիւն հաստատեցին։

Հայի հացը, հայի փողը,
Մինչեւ ե՞րբ Տանիկն ուտէ.
Իր գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աչքի տեղ աչքեր հանել,
Ատամի տեղ ատամներ.
Մեր մէկ հաւը գողացողին
Ամբողջ տունը թալանել։

Վրիժուց կայծակ թող բորբոքուի
Հայ առիւծների սրտում
Թաղենք իսլամի գլուխներ
Դիւցազուներու երկրում։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԿՌԻԻ ԿՈՉ

(Լա Մարսէյեէզի եղանակով)

Յառա՛ջ, հայեր, հայրենիքի
Ազատութեան ժամն է հասեր.
Զէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
Դէմ արնոտ դրօշ է պարզեր։
Զէ՞ք լսեր դեռ Հայաստանի
Ժողովուրդի հառաչանքներ.
Քիւրտեր, թիւրքեր հայ գիւղերու
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ։
Զէնքեր առնե՛նք, հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառա՛ջ, թող թըշնա-
մուն
Զընջըւի անարգ անուն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:02 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սոսկացէ՛ք, ո՛վ բռնաւորնե՛ր,
Եւ մատնիչներ Հայաստանի,
Սոսկացէք, զի ժամն է հասեր
Որ վրէժ առնեմք ձեր գործերի։
Ամէն հայ ձեզ դէմ պիտ կըուի,
Մեռնողին տեղ՝ մեր հայրենիք
Նոր զաւակներ մեզ պէս կը ծնի.
Եւ չենք հատնիր՝ մինչեւ մեռնիմք։
Զէնքեր առնենք եւայլն։

Կուին մէջ մեր մեծ եղբայրներ
Թէ մեռնին՝ մենք հոն կը մտնենք.
Կերթանք գտնել անոնց հետքեր
Ուր քաջաբար մեռնիլ կուզենք։
Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կերթանք մեռնիլ անմահ.
Այդպիսի դառն կեանք մեզ պէտք
չեն,
Մենք ուխտած ենք վրէժ՝ կամ մահ։
Զէնքեր առնենք եւայլն։

Ո՛վ դու, սուրբ սէր հայրենիքի,
Վեր վերցո՛ւր մեր թոյլ բազուկներ
Ազատութի՛ւն մեր պատելի,
Զօրացո՛ւր քո հայ պատպաններ.
Թո՛ղ յաղթութիւն լսէ քո ձայն
Եւ վազէ գայ մեր դրօշին տակ.
Թո՛ղ բռնութիւն սուլթանական
Տեսնէ քո փառք՝ մեր յաղթանակ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զէնքեր առնե՛նք, հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք յառա՛ջ, թող թշնա-
մուն
Զընչչի անարգ անուն։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՍԻՓԱՆ ՍԱՐԵՐ

Լո՛, լո՛, լո՛... Սիփանայ սէգ սարի վե-
բայ
Կտրիճները շտապով գալիս են-միանում.
Այնտեղ անմահ որդիք անյաղթ հըսկայ
լերան
Զէնք ու զրահի են ընթանում։ (*կրկնել*)
Ի՞նչու վառում են, զինում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Թրոչում, անցնում անհամբեր,
Քանց Սիփանայ պինդ քամին՝
Սըլանում են դէպի ցած, դաշտի մէջ է
թըշնամին.
Նա է վառում նըրանց վըրէժ անմոռաց։
Ահեղ կուին մէջ վատ թըշնամին
Հատու սուսեր է հանել, ցեղապետին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ըսպանել,
Նա էր վառում քաջերին։
Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած՝
Թըշնամու ընդդէմ, մահու մարտի է
կանչում.
Արեան մեծ վըրէժ է թըշնամուց պա-
հանջում.
Եւ թըշնամին պարտըւած՝
Թողնում փախչում սարէ սար,
Ցետ է ձգում մեծ աւար։ (*կրկնել*)
Արիւն վօթեցին, արիւնի փոխան՝
Արիւն խըմեց ծարաւի սուսեր.
Նըրան յաղեցած՝ դըրեցին պատեան։
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր.
Սէգ Սիփանայ կանաչ գըլխին
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդրում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն է երեւում.
Էլ չի գալ մեզ մօտ թըշնամին,
Սուր տեսաւ մեր պողպատին։ (*կրկն.*)

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՈՒԵՆՔ

Մենք պէտք է կուենք եւ ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը մահով յետ խլենք,
Այսքան դար լացինք, ո՞վ էր լսողը,
Մեզ ի՞նչ շահ բերեց արցունքի ծովը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Էլ չգանգատեմք եւ ոչ լաց լինեմք,
Կըրակուած սրտով մեր գործը վարեմք.
Անվեհեր քաջին այս է պատկանում—
Միշտ ազատ մեռնել կուի լայն դաշտում։

Մոլի եւ երկչոտ թշնամին թող լայ,
Երբ հայ քաջի դէմ կուի դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք սովից, տանջանքից;
Ոչ էլ մահառիթ դաժան գնդակից։

Անէ՞ծք այն հօրը՝ որ ազգի սիրու
Չի մղում որդուն թափելու արիւն.
Ամօ՞թ այն հային եւ բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք։

ՏԱԼԻՈՐԻԿ

Տալորիկցի կըտրին եմ դորդ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի՝
Հին քաջ հայոց եմ մընացորդ։
Տալորիկցի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թիւրքին առաջ,
Քարուտ լերանց ես ազատ լան՝
Չեմ տեսեր ոչ արօր, ոչ ման։

Հայ աղբըրտիք, ջան աղբըրտիք,
Տալորիկցի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրուն համար,
Եկէք դէպ ինձ յառա՛ջ, յառա՛ջ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչեւ փակեմ աչքըս խաւար,
Պիտ չի կոխէ հոս ոտք օտար։
Իմ մամ ծնաւ զիս պալու ծոց,
Ընկուզի կոնդ մ'եղաւ օրրոց,
Տըկլոզ ծընած՝ մեծցայ տըկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց։
Հայ աղբրտիք, եւայլն։

Թող այլք բնակին հովիտն ու դաշտ
Վատ անգութին հետ լինին հաշտ
Ես պիտի մնամ միշտ աննըւան
Թէեւ վըրաս գայ քըսան վաշտ։
Իսկի չքաշեմ բանի մ'կարօտ
Քանի ունիմ գընդակ, վառօդ,
Ազատ ապրիմ, մեռնիմ ազատ,
Սասնոյ որդի եմ հարազատ։
Հայ աղբրտիք, եւայլն։

Ոտքըս բոպիկ, սիրտըս միշտ բաց.
Ի՜նչ փոյթ թէ քոյրըս ալ մերկ մընաց,
Իմ մօտ մէկ է արեւ, բուք, ցուրտ,
Բա՛ւ է, չիշխեր հոս թիւրք կամ քիւրտ։
Իմ կեանքըս խիստ է եւ չարքաշ,
Փափուկ կեանքի վայլից չեմ վարժ,
Բընակարանս է ապառաժ,
Ընկեր՝ մրրիկ ու երկրաշարժ։
Հայ աղբրտիք, եւայլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԶԻՆԻՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարդիր որդեակ, ուշ բե՛ր վե՛ր կաց
Պատերազմի փողն հընչեց.
Զարթի՛ր գոչեց ձայն հայրենեաց
Կենաց մահու ժամն հընչեց։

Պատրաստեր եմ քո զէնքերը
Եւ քո գօտին ոսկեթել,
Եւ մի պսակ ոսկեփետուր
Երկինք կանխէ պատրաստել։

Հաւաքեր եմ քո զէնքերը,
Ահա՛, գըլխիդ վերև կան,
Ինչպէս երբեմն քո գըրքերը՝
Երբ կ'երթայիր վարժարան։

Ելի՛ր, կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կապեմ քո ուսէդ,
Եւ սուրբ դրօշակն հայրենիքիդ
Թո՛ղ ծածանի աջ թևէդ։

Միթէ դուն չե՞ս յիշեր, երբոր
Գըրիչ ու թուղթ տըւի քեզ,
Փոխան դոցա, ըսի, մի օր
Ուրիշ բաներ կուտամ քեզ։

Ահա, փոխան գրչի՝ քեզ սուր
Փոխան թղթի՝ կուի դաշտ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ազգի համար գնա՛, կեանքդ տուր,
Քո մայր ժըպտի երկինք հաստ։

Գըրչով ուսար ազգ, հայրենիք,
Գընա՛ սուրով փըրկել զայն.
Մեր հայրենեաց վըշտաց հերի՛ք՝
Զըսաւ աշխարհը համայն։

Պ. Վ. ՆԱԹԱՆԵԱՆ

ԵՐԲ ԱԼԵԿՈԾ...

Երբ ալեկոծ ծովի վրայ
Իմ մակոյկը խորտակւի,
Ես փըրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կտրի։
Բոլոր ուժովս եւ համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափը կը թռչեմ։
Անհաւասար այս կռւի մէջ
Թէ ուժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդը ինձ տանեն։
Այն ժամանակ մի ըսփոփանք
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նըման՝
Կռիւ տալով մինչեւ վերջ։

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:08 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԿՌԻԵՑԷ՛Ք ՏՂԵՐՔ

——

Կրուեցէ՛ք տղերք, կրուեցէք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած՝ թրշնամու առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից թրշնամու՛ ահը,
Ցառաջ խիզախենք իբրև նահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մի գրնդակ։

Մեզ տօնախրմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կը սպասեն մեր հէգ եղբայրներ.
Չի ծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Այս անգամին էլ ցոյց տանք թրշնամուն՝
Թէ ի՛նչ է հայու ուժն ու քաջութիւն։

Ահա՛ քիւրդերը փախան սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած.
Կրրակ տեղացէ՛ք, անդադար կրրակ,
Փա՛ռք ժողովուրդին, առատ է գրնդակ.
Օ՛ն, կուենք տղերք՝ մինչ շունչը վերջին,
Արժանի լինինք փառքի պրսակին։

Մեռնենք յուսալով, մերն է ապագան,
Մեռնենք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաս-
տան։
Այսպէս յորդորեց ու ընկաւ արին,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թողլով մեզ անուն՝ յիշատակ բարին՝
Ահեղ կուի մէջ մի փոքրիկ հերոս՝
Անմոռանալին կըտրին Մարտիրոս։

Մ. Ե.

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՔԱՑԼԵՐԳ

Հրաժարի՛մք ընկերներ, հին օրէնքներից
Թա՛փ տանք նրանց փոշիներ ոտներից,
Մենք կ'երթանք հալածուած ընկերների
հետ,
Մենք կ'երթանք մեր սոված բանուորների
հետ,
Դաւադիր թշնամուն մենք միշտ կ'անարգենք,
Ու նրանց կռուելու կը կանչենք։
Խիզախենք ընկերներ, այս կուումն արդար,
Թող կորչին կարգերը միշտ վատթար,
Չենք ուզում բուրժուաներ, կղեր ճրիակեր,
Չի՛ լինին աղքատներ, ստրուկ ծառաներ,
Թո՛ղ ելնեն հիմնելու արդար աշխատանք
Ընկերվար դրօշին միշտ պարծանք։
Հոչակենք ընկերնե՛ր, իտէալ կեանքի,
Սկզբունքներն արդար և ոսկի,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տանջուածներ, զրկուածներ, բոլոր ազգերի,
Ընկերներ, եղբայրներ, ցաւոտ օրերի,
Թող ելնեն հիմնելու արդար աշխատանք
Ապագայ ներդաշնակ և ազատ։

ՔԱՑԼԵՐԳ

Հ. ՑԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Մշակ բանւոր, ընչչէր ախպէր,
Արի՛ք, միանանք, յառաջ գնանք...
Աշխատանքի դատի պաշտպան
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք։

Ա՛խ, մենք տանջւենք, քրտինք թափենք,
Արիւն վաստակ դատենք, դիզենք,
Շահագործող ցեցեր վատնեն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն։

Դէ՛հ, սեւ օրեր, բողոք դարձէ՛ք,
Արիւն, քրտինք երկունք մտէք,
Տանջանք, զրկանք լեզու առէ՛ք,
Սոցիալիզմի ճամբան բացէ՛ք...։

ՄԵՐ ԴՐՕՇԱԿԸ

Մայր հայրենիքի ստրուկ օրերում՝
Ազատ հոգու տէր—էլ մարդ չմնաց.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ճրճուների պէս հայ մարդն էր սողում,
Հայրենի փառքի ստերը մնաց։

Եւ դողդողացին մանուկներ, ծերեր,
Անաչառ կեանքի մահազդու ցրտից.
Բուն մտան բոլոր դալո՛ւկ, կիսամե՛ռ,
Գուցէ ազատին բռնութեան ձեռքից։

Բայց բռնութիւնը անարգ, խայտառակ,
Ծանրացաւ հայի ցաւատանջ կրծքին.
Արեան-արցունքի ծովումն անյատակ—
Թաղուեց մեր սիրտը, մեր խիղճ, մեր հոգին...

Բայց մէկ էլ յանկարծ՝ զանգը ղողանջեց,—
Ազատութեան զանգը մեր սար-ձորերում,
Մրափող ծերը փրփրեց, անիծեց
Որ ցուրտ գիշերին քունն են խանգարում։

Եւ մանուկները քնից վեր թռած՝
Բոցոտ աչքերով հեռուն նայեցին.
Մի կտրին տղայ կարմիրներ հագած—
Արիւնոտ դրօշակ բռնել էր ձեռքին։

Արիւնոտ «դրօշակ», սո՛ւրբ Ազատութեան,
Մենք պինդ կը փարինք ծալքիդ գոչեցին
Մինչեւ խորտակւի բռնութեան շղթան
Մինչեւ ազատւի ստրուկ հայորդին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արիւնոտ «դրօշակ», յեղափոխութեան,
Անվախ կը նայինք արիւնոտ տեսիլդ.
Զինուոր կը գրինք մենք ազատութեան,
Զէնք կը վերցնենք դաշոյնդ ու գրիչդ։

Եւ երբ հայրենիք իսպառ ազատուած՝
Ստրկի շղթան ձեռքից թօթափի —
Ծերուկ զինուորներդ բահդ վերցրած,
Մշակ կը դառնանք մայր հայրենիքի։

Արիւնոտ դրօշա՛կ, դու միշտ փողփողիր,
Բարձր լեռներում մեր հայրենիքի.
Կարմիր ծալքերովդ ծփա՛, ծածանիր,
Թո՛ղ հայ ժողովուրդ յաւիտեանս ապրի։

ԱՍԵԼԻՆ

ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նըստած դու նժդեհ,
Հայրենեաց բաղդին մօտուց ես տեղեակ.
Քարոզ քաջարի նոր ըսկըզբանց վե՛հ,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ։

Նոր գաղափարի քո ցանած սերման,
Ազնիւ պտուղներ հասուն են արագ.
Կարին և Պոլիս որոտման նման,
Անդրանիկ շարժումք ծնաւ քեզ, Հնչակ։

LIBRARY
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զար բրոնակալը հայոց կեղեքիչ՝
Վախէն պահեցաւ ոսկէ գահի տակ.
Խուլ Եւրոպայի թրնդաց մեծ դահլիճ,
Հայը ցընցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ։

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա՝
Հասան, կարմրին, արեան նմանակ,
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչա՛կ։

Կոչնակ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր արագ,
Թո՛ղ հայք ոտք ելնեն—ծագէ մինչև ծագ.
Փրշրէ ժանտ շղթան, ծագէ նոր արև
«Ազատ ենք», հընչէ, ոսկեզօծ Հնչակ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՍԱՍՈՒՆ

Իսլամական գոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի.
Մի վիատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն.
Մեր պապերից սովրել ենք
Մեռնիլ տղամարդի պէս,
Զոր մեզ թողին յիշատակ։

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քիւրտերով,
Տալորիկի անցքն է փակուած թիւրքերով.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զքեզ տեսնեմ քաջ Մուրատ,
Սուրդ շարժիր անվհատ.
Մեր հեռաւոր եղբարյներ
Զեն կենար միշտ անտարբեր
Շուտով կրգան օգնութեան։

Թնդանօթի դէմ դրել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով,
Ի սէր Աստուծոյ դժուար է
Հպատակիլ իսլամին.
Լաւ է մեռնիլ առանց հաց,
Քան յանձնուիլ վատ թուրքին
Անգութ և անաստուածին։

Հայ աղջիկներ, առէք վառօք և կապար,
Լցէք դատարկ փամփուշտները չարաչար.
Իսկ դուք կանայք անվհատ,
Առէք սուր և հրացան,
Խրախուսեցէք հայ քաջեր,
Ազատենք մեր հայրենիք
Զեր կանացի արիւնով։

ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ...

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան դրրօշակ,
Կեցցէ հայրենիք գոչելով
Բարձրացրրին աղաղակ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թնդաց որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կը գան հայ զաւակներ
Հայրենիքին օգնութեան։

Գուրգէն, Վահան, Հրայր-Դժոխք,
Քաջ Անդրանիկ զեկավար
Տալորիկի լեռներումը
Շրջում էին անդադար։

Սարսափեցին քիւրդ ցեղերը,
Մինչ պալատը Սուլթանի —
Հրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկների։

Ահա՛ անգութ մեր թշնամին...
Սարսափելի տեսարան...
«Ժամանակ է վրէժ լուծել...»
Գոչեց ձայնը հայկական։

Կրակ տեղաց հայ քաջերի
Բնակավայր դիրքերից.
Կոտրուեցին թշնամիներ
Ահռելի գընդակներից։

ՖԻԴԱՑԻ ԵՐԳԸ

Դաշնակցական խումբ, գընանք մենք
Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անդրանիկը քաջ իր ընկերներով
Կուզէ պատերազմ, կը սպասէ գարնան։

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայի խօսքն է քաջ, գարուն թող բացուի,
Հայերը բոլոր հոգով միացած՝
Հրացանն ուսերին, մերն է Նոր Տարին։

Խմբապետները հոգւով են երդուած,
Ցիդայի ուժով գնում են առաջ,
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ։

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք գետին տենչաւառ.
Վեհ անունդ պիտի յիշուի դարէ դար,—
Հայոց լեռներ քեզ ապաստան, Անդրանիկ։

Թշնամիներդ երբ լսեն քո անունը՝
Օձերի պէս կը սողան իրենց բունը.
Երակներուդ ազնիւ քաջի արիւնը
Չի ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ։

Հայոց կուսանք դափնեայ պսակ թո՛ղ
հիւսեն,
Քնքոյշ ձեռքով քո ճակատը պսակեն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գոհարներով անվախ կուրծքդ զարդա-
    բեն —
կեցցէ՛ս յաւէտ, դո՛ւ անսասան Անդրա-
    նիկ։

Հայաստանի սոխակները քեզ համար
Թո՛ղ դայլայլեն գիշեր ցերեկ անդադար.
Անյաղթ մնաս, դո՛ւ քաջ կուի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրա-
    նիկ։

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ արագ,
Տեսանք որ քաջ խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք։

Կեանքերը ազգին նուիրած,
Կտրին խանն առաջ ինկած,
Գնում էին տանկաց սահման.
Թրուչում էին որպէս կրակ։

Մութ անտառից անցնում էին.
Ամէն մէկը առիւծ էին.
Նժոյգ ձիանց վրայ նստած,
Մերկ սրրերը քաշել էին։

Երբ քաջ խանը եկաւ Բասեն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թնդանօթներ արձակեցին,
Հայ քաջերի մօսիններից
Գնդակները գոռգոռացին։

ՍԷՐԷՄՃԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջան փիդայ եմ,
Թափառական տուն չունեմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկել՝
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։

Արևոտ երկրի սուգ ու շիվան
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջուած Հայրենիքի սէրը
Զը վախեցուց վտանգից։

Սասնոյ լեռներ գողգոթայ են
Շատ բարձրը են, խիստ դըժուար,
Կեանքի խաչը ես շալակած
Այնտեղ տարի շատ յօժար։

Ես խաչեցայ, ջան փիդայի
Ըսկըզբունքս սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով
Հայ զինուորը զօրանայ։

Մակեդոնական միութիւն
Իմ խաչովը կընքբեց,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եղբայրական սիրոյ զէնքով
Գազան Սուլթան խորտակեց։

Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Ցոյսըս դուք էք, ընկերներ,
Շարունակեցէք սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քաջեր։

Կախաղանից երբ որ քամին
Ինձ տարուբերէ ճօճալէն,
Ցիշէք Պետրոս Սէրէմճեանին
Թշնամուց վրէժ գոռալէն։

ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թեւերդ ուժգին,
Կռնակդ ամուր, պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռիվ չիտես,
Դու անըզգայ երիտասարդ։

Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբօրդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում։

Ամօթ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունիս քո ձեռքին,
Քո եղբօրը կռուի դաշտում,
Տապալում է թշնամին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զեռքդ տուր ինձ երդուենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կռուինք առիւծաբար,
Ի սէր ճնշուած հայ ազգի։

ՄՇԵՑԻ ՄՕՐ ԱՂԱՉԱՆՔԸ

Թիփի բորան մութ գիշերին
Կը պտտէ փիդային,
Պատրօնդաշը խաչփակ թալած.
Զեռքին առած հրացան։

Ա՛խ, ձեզ մատաղ, ջանֆիդայիք,
Ձեր մէր ձեզի թող մեռնի,
Մշու սուլթան սուրբ Կարապետ,
Ձեզի քեօմագ թող եղնի։

Ա՛խ, փիդայիք ձեր սադաղէն,
Ձեր խետ տարէք զիմ տղուն,
Ձեր խետ մեռնի ձեր խետ ապրի.
Ազգին մատաղ զիմ տղէն։

Թող դէն թողնի խարօր ու մանն
Իմ մէկ ու ճար ազիզ լանն,
Քիչ մա՛լ թող թանքի խետ խաղայ,
Էլ թող չտայ քրդին խարն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՐՇ

Քանի թըմբինք, բաւ է եղբարք
Շրջենք աչեր աջ ու ահեակ։
Շատ ըստրուկներ եղան ազատ
Միայն մենք մընանք հլու հնազանդ։

Զէյթունցիներ, մեր զբօսանքն
է պատերազմ եւ արշաւանք.
Սուր, թուր, գընդակ եւ հրրացան
Մեր խաղալիքն են յաւիտեան։

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
Թող չտեսնէ ըստրկութիւն.
Քանի ունի մեզ պէս քաջեր,
Ապրի՛ Զէյթուն, կեցցէ՛ Զէյթուն։

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Կարկուտ տեղաց Խանասօրայ դաշտումը,
Ֆէտայիներ դաշնակցական, վրէժ առան հովտումը։

Սոսկաց քիւրտը, լեղապատառ Մազրիկ-
ցին,
Զէր սպասում իսպառ ջնջուել քաջ ֆէտա-
յու գնդակից։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Եամա՛ն, Աստուած փէտան եկաւ ո՞ւր փախչիմ»,
Ասաց որդուն կուրծքին սեղմած լեղապատառ քրդուհին։
«Մի վախենար, հանգիստ եղիր, բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժառու քաջ փէտան»։
Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասօրայ կանաչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ։
Հայեր յիշեցէք նուիրական այս օրը.
Ցուլիս ամսոյ քսանհինգին կատարեցէք մեր տօնը։

ՍԵՐՈԲ ԱՂԲԻՒՐԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է, ի՞նչ կ'սպասէ,
Արդէն ժամանակ է՝ թող գայ,
Մահ, պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է՝ թող գայ։

Կամ կռուելով մեռնենք, անցնենք,
Կամ զէնքով փրկութիւն ստանանք,
Կռուելով փրկենք Հայաստան,
Ազնիւ մտածողը թող գայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մերթ Սասնոյ մէջ, մերթ Սիփան
Միշտ կռիւ մղենք անխափան,
Կռուելով փրկենք Հայաստան,
Այս յոյս ունեցողը թող գայ։

Այս հինգ դար է՝ մեզ կ'սպանեն,
Բրոնի մեզ կրօնքէ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թող գայ։

Քարէ հոգի, երկաթէ մարդ
Հալածէ թող քիւրտը նամարտ,
Անվախ քարի տակ չոքողը,
Անսխալ խփողը թող գայ։

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով մաքրենք պիտ մեր հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ—
Սերոբին սիրողը թող գայ։

ՀԱՅԴՈՒԿԻ ՍԻՐՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Ես հանեցի սուրս պատեանից.
Արտասուքովս օծեցի.
Տըրտմաւ անուշ սիականս՝
Երբ իմ ողբըս կարդացի։
Նա երդուեցաւ իմ սիրովըս
Զը խնայել վատ թըշնամուն.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այս պայմանով աշխոյժ քաջին
Սուր, հրացան յանձնեցին։

Աստուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէ՛ք ուխտենք միասին
Այսուհետեւ էլ չը սիրել
Կրուից փախչող վախկոտին։

Խիստ զըզուելի կերպով նայենք
Ոսկու սիրով մեռնողին,
Համբոյրի տեղ թոյն կամենանք,
Թըշնամուց վրէժ չառնողին։

Ոգեւորուած կանչեց քաջը.
«Ո՞ւմ կսպասենք, վայ մեզի»,
Նա հեռացաւ մըռընչալով,
Ինչպէս կորիւնն առիւծի։

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վինակ
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր Պատերազմի դաշտ
Կսպասեն մեզի։

Դուշմանը մեզ տուեց «ջան փիդայ» անուն,
Այդ անւան համաձայն տեսաւ զօրու-
թիւն.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնու-
թիւն,
Ուխտել ենք կուել, այդ սիրով մեռնիլ,
Համոզուած ենք որ ատով միայն կայ հա-
յոց փրկութիւն։

Ստամբոլը պիտի լինի արեան ծով,
Ամէն կողմից կռիւ կըսկսի շուտով.
Կոտորենք Բաշկալայ, անցնենք հետ կեր-
պով,
Աջից Վարդանը, ձախից իշխանը,
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,
Փառք Դաշնակցութեան։

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց թշնամոյն.
Քաջ Զէյթունը յաղթեց վատ, չար գազա-
նին,
Կեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը, կու-
սակցութիւնը,
Բաղդաւոր օրեր, պարծանք հայերուն։

ԽԱՆՈՒՄ ԵՒԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս եկայ Ալագեազ տեսայ,
խանում, Եւա ջան
Աբարանը աչքերիս դուման ա դառել.
Դու կեցիր բարով, ես կերթամ լալով,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լալով ողբալով, քէօշ ու բարխանով,
Սարեր ման գալով։

Ոչխարն էստին կարծայ, էնդին գառները,
խանում, Եւա ջան.
Կանչըցել ա ծաղիկները, ծառները։
Դուն կեցիր բարով, եւայլն։

Արի երթանք քո ման գալած արտերը,
Քեզի տեսայ թազացաւ իմ դարդերը։
Դուն կեցիր բարով, եւայլն։

Ձեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,
Զուխա, շալվար, լալով տունը բերեցին.
Օրեր, գարնան օրեր դուք ո՞ւր էք կորեր։

Ես Ալեքն եմ, չամոլեցի մէկ ջիւան,
Տուքսաղ եղայ ըստուց չուրի Երեւան։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քէօչ ու բարխանով։
Սարեր ման գալով։

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի
մարալ կը փնտռես,
Ասա, եարաբ, դու չտեսա՞ր իմ մարալը,
իմ բալէս,
Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ ջիւա-
նը, իմ բալէս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գլուխն առաւ, քարերն ընկաւ, իմ ծա-
ղիկը, իմ լալէս...»։

—Տեսայ, քոյրիկ, նաշխուն բալիդ. կար-
միր պսակ էր կապել,
Սիրած եարի համբոյրի տեղ, սրտին
սրտին վարդեր էր բուսել։

—Որսկան ախպէր, ասա՛, եարաբ, ո՞վ
էր հարսն իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը իմ մարալիս,
իմ բալիս։

—Տեսայ, քոյրիկ, սիրուն բալիդ, քարն
էր դրել բարձի տեղ։
Անուշ քընով տաք գընդակն է կըրծքում
գրկել եարի տեղ։

Սարի մարմանդ հո՛վն էր փչում, վառ
նակատը մարալիդ.
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ
քո բալիդ...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԻՐԵՑԻ ԵԱՐՍ

Սիրեցի եարը տարան,
Եարայ տուին ու տարան,
—Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սիրտս ու տարան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ցաւս խորն է, ճար չը կայ,
Ճարը կայ, ա՜խ, ճարող չը կայ.
—Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացաւ ընկեր չը կայ։

Լաւ օրերը գընացի՜ն,
Ափսոս ասին, գընացին,
—Էս ի՜նչ զուլում աշխարհ է,
Սեւ դարդերը մնացին։

ԽԱԲԻԱԾ ԱՂՋԿԱՆ ԵՐԳԸ

Հանգիստ իմ անոյշ
Անցար գընացիր.
Միայն վէրք անբոյժ
Սըրտումս թողեցիր։

Սոխակ գեղեցիկ
Կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ
Ինձ չէ գըրաւում։

Քեզանով միայն
Երջանիկ էի.
Տիկին ինքնիշխան
Ինձ կարծում էի։

Ցերեկը մենակ,
Փակուած սենեակում

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ողբում եմ անյագ—
Ոչ ոք չէ լըսում։

Գիշեր է գալիս—
Մահին եմ մըտնում.
Տըրտում է հոգիս
Քունըս չէ տանում։

Մազեր թուխ, երկայն,
Աչեր գըրաւիչ.
Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն
Ի՛նչ հոգի կըտրին։

Ո՞հ, սիրտըս այրուած
Ողջ բեզ է կանչում.
Ողջ բո անմոռաց
Անունդ է յիշում։

Անգո՞ւթ ինձ խաբեց,
Ուրիշին սիրեց,
Ա՞խ, նա ինձ դեռ վա՛ղ
Պատրաստեց դագաղ։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՔՈ ՓԱՓԱՔՈՎ

Քո փափաքով վառվում եմ, արի՛, սիրա-
կան ո՞ւրտեղ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ո՞ւրտեղ ես.
Ճանապարհդ նայելով աչքերուս լոյս չը մնաց,
Ե՛կ երեւոյթ տեսանեմ, ազնիւ սիրաբան ո՞ւրտեղ ես։

Ի՞նչ պատահեցաւ անուշիկ, որ դուն հեռացար ինձանից,
Քաղցրախօս անոյշ լեզու, անւամբ գովական ո՞ւրտեղ ես,
Քանի՞ մէկ քանի՞ չարաչար տանջւիմ այլոց ձեւով,
Ո՛վ վեհապանծ անւանի, կեանքիս պահապան ո՞ւրտեղ ես։

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ սուան,
Դուն արի՝ ի միասին գնանք դատարան, ո՞ւրտեղ ես,
Թող միայն ասեն, Ջիւա՛ն, սիրականդ կուգայ,
Թող տատանիմ քո սիրով մինչեւ յաւիտեան, ո՞ւրտեղ ես։

ՄՈՒՇ

Թո՛ղ պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ երգ չհնչէ Սասնոյ լեռներում,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թո՛ղ ժպիտ չգայ Հայերուս դէմքին,
Թող թախիծ տիրէ Հայերուս սրտին։

Հայի ձեռքեր արիւնով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատած
Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան
Հայոց եդեմի դաշտում աննման։

Քանի՞ հայ աղջիկ չէ զարդարելու,
Ծաղկով իր կուրծքը շքեղ պճնելու
Թող երգ չհնչէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ պլպուլ չերգէ Սասնոյ լեռներում։

ՍԻՐՈՑ ԵՐԳԵՐԻՑ

Պարտիզում վարդեր բացուած կը սպասեն սոխակին,
Առանց սոխակ թառամած՝ կաքօտ են պսակին,
Արդեօք ո՞վ է, դուռը թակում, ա՜խ սիրտը կը դողայ,
Իմ սիրուհիս ո՞ւր է գնում, ա՜խ, սիրտս կը դողայ։

Գետակի ալիքները գնում են խայտալով,
Սիրահարի աչքերը նայում են արտասուելով.
Արդեօք ո՞վ է դուռը թակում, ա՜խ սիրտս կը դողայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իմ սիրուհիս ո՞ւր է գնում, ա՜խ սիրտս
կը դողայ։

Թիթեռը ճրագի մոտ շրջում է անդադար,
Մինչ իր վերջ սիրակարոտ չունի նա օր
դադար,
Սիրուհի տանը նստած սպասում է եա-
րին,
Քնարը ձեռին առած՝ նւագում է լալա-
գին։

ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզի՛ր աղբիւր, պարզիր քեզնից ջուր
տանեմ,
Պարզի՛ր, պարզիր բէկի տղին ջուր տա-
նեմ։

Աղբիւր գիտե՞ս քիւրդը մեզ ի՞նչ կանէ,
Կը կողոպտէ, կը չարչարէ կսպանէ։
Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներ ունէինք։

Գահ ու փառքից ազատ կեանքից զրկուե-
ցինք,
Արիւնարբու թշնամու ձեռք մատնուե-
ցինք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դէ՛հ, շո՛ւտ պարզի՛ր բէկի տղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, Խան-Մուրատին ջուր տանեմ։

ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ

Հո՛վ արէք, սարեր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք.—
Սարերը հով չեն անում.
Իմ դարդին դարման անում։

Ամպե՛ր, ամպեր, մի քիչ զով արէք,
Վարար անձրեւ թափէք, ծո՛վ արէք,
Գէշ մարդու օր-արեւը,
Սեւ հողի տակով արէք։

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք.
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարե՛ր, ձորեր, դաշտեր ու ջրերեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վե՛ր կացէք իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սրտի ցաւերը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք.—
Սարերը հով չեն անում.
Իմ դարդին դարման անում։

ՀՈՎԻԿ

Ահա ելաւ լուսին արծաթ
Մութ ամպերու ետեւէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն
Անո՛ւշ հովիկ, փըչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բե՛ր երգն անուշիկ։
Նաւակին մէջ իմ գեղուհին,
Փռուած՝ անփոյթ՝ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին,
Հընչուն ձայնով մը յըստակ։
Անո՛ւշ հովիկ, փըչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բե՛ր երգն անուշիկ։
Ձայնով կ'երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ.
Ալ թո՛ղ, աղջիկ երգդ ու նուագ
Բոց աչքե՛ըդ ինձ դարձուր։
Անո՛ւշ հովիկ, փըչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ։

ՇԱՆԹ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ...

Ձախորդ օրերը ծրմռայ նրման կուգան ու
կերթան
Վրհատելու չէ, վերջ կունենան, կուգան
ու կերթան.
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ
երկար,
Որպէս յանախորդ շարէ-շարան կուգան
ու կերթան:

Փորձանք, հալածանք եւ նեղութիւն ազ-
գերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան
ու կերթան.
Աշխարհը բուրաստան է յատուկ, մար-
դիկը՝ ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ, պալասան՝ կու-
գան ու կերթան.

Ոչ ուժեղը թող պարծենայ ոչ էլ տկարը
թող տխրի,
Փոփոխակի անցքերը զանազան՝ կուգան
ու կերթան,
Արեւը առանց վախենալու ցայտում է
լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու
կերթան:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է ՋԻՒԱՆ, եւ ազգերը՝ հիւր,—
Այսպէս է կանոնը բընական—կուգան ու կերթան։



Generated on 2016-06-29 06:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ

Ազատն Աստուած այն օրից. 6
Ազնիւ ընկեր մեռանում եմ. 43
Ահա եկաւ լուսին արծաթ. 93
Ահա սուրհանդակի սայլակը. 46
Աղօթարանը բացուեցաւ ժամանակ. 13
Անցար գընացիր. 87
Արի իմ սոխակ, թո՛ղ պարտէզ. 15
Բամբ որոտան, բարձուստ. 52
Բերդիցը դուրս եկայ Ալագեազ. 84
Դաշնակցական խումբ գնանք մենք. 74
Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին. 73
Դեռ գիշեր է, առաւօտ չէ. 51
Դու զո՞վ խնդրես, մայր իմ. 37
Դուն ընստեր ես, ճամբաներուն. 22
Եթէ տըժգոյն մահու հրեշտակ. 29
Ես լսեցի մի անոյշ ձայն. 44
Ես հանեցի սուրս պատեանից. 82
Երբ ալեկոծ ծովի վրա. 66
Երբ որ բացւին դռներն յուսոյ. 41
Զարդիր որդեակ ուշ բեր. 65
Էր հեռանաս քո մայրենի աշխարհից. 48
Ընցաւ տարին. հայոցս էլ փառք. 47
Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր. 40
Թէ հայրենեաց պսակադիր. 33
Թէպէտ վտար քաղքէ քաղաք. 34
Թիկունքդ լայն թեւերդ ուժգին. 78

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թիփի բորան մուք գիշերին. 79
Թո՛ղ բարձրացնեն ճռինչ, աղաղակ. 32
Թող կորնչին տանիկները. 58
Թող պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում. 89
Թող փչէ քամին պաղ, պաղ երեսիս. 14
Ի բիւր ձայնից բնութեանց. 39
Իբրև արծիւ սաւառնում ես 75
Ի զէն հայե՛ր, ի սուր և ի հրացան. 57
Ինչո՞ւ ապշած ես լճակ. 30
Իսլամական գոռ վաշտերը կատաղի. 72
Լլռեց, ամպերը եկան ծածկեցին. 19
Լուսին չկար, մուք գիշեր էր. 76
Լո՛, լո՛, լո՛, Սիփանայ սէգ. 61
Խաղաղ դաշտի որդիք. 55
Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ. 26
Կարկուտ տեղաց Խանասորայ. 80
Կըուեցէ՛ք տղերք, կուեցէ՛ք. 67
Կոռ՛ունկ ուստի՞ կուգաս. 25
Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք. 31
Հեռաւոր երկիր նստած դուն. 71
Հերիք որդեակ այսքան տարուան. 17
Հիմի է՞լ լռենք եղբարք. 11
Հով արէք, սարեր ջան. 92
Հրաժարի՛մք ընկերներ, հին. 68
Զախորդ օրերը ձմռայ նման. 94
Զա՛յն տուր, ո՛վ ծովակ. 21
Մայր Արաքսի ափերով. 10
Մայր հայրենիքի ստրուկ օրերում. 69
Մանկութեան օրեր. 8

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2016-06-29 06:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մենք անկեղծ զինուոր ենք. 83
Մենք պէտք է կուինք. 62
Մեր հայրենիք թշուառ անտէր. 5
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր. 45
Մշակ բանուոր, ըէնչպէր ախպէր. 69
Ցառա՛ջ, հայեր, հայրենիքի. 59
Ո՞հ դու բարեկամ այրած սրտերու. 20
Ո՞հ ինչ անուշ եւ ինչպէս զով. 36
Ով ծիծեռնակ, վարանած թռչնիկ. 28
Ով որ քաջ է, ի՞նչ կսպասէ. 81
Որսկան ախպէր, սարէն կուգաս. 85
Պարզի՛ր աղբիւր, պարզիր. 91
Պարտիզում վարդեր բացուած. 90
Պզտի՛կ տղայ, չեմ օրօրրիլ, 16
Սար ու ձոր ընկած, մէկ չոր. 24
Սիրեցի եարը տարան. 86
Վէրքերով լի ճան փիդայ եմ. 77
Տալորիկցի կտրիճ եմ դորդ. 63
Քանի թմրինք բաւ է եղբարք. 80
Քնի՛ր իմ բալիկ, օրօր ել արա՛. 50
Քո փափաքով վառում եմ, արի՛. 88

Generated on 2016-06-29 06:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-06-29 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2016-06-29 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN-DEARBORN
3 9076 00289 5659

Generated on 2016-06-29 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002895659
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN